

հակները գործեցին և նուիրուեցան իրենց գործին: Ատրիկա արհամարհելն էր Քիզիբական ուժերով ձեռք բերուած յաղթանակները, և դառնայն էր «անեղին իմաստը» տարածելու զազափարին՝ յողովուրդին կեանքին մէջ, եւ չայ Գիրը, չայ Աստուածաշունչին թարգմանութիւնը, չայ Իսլամը, բխումն են այս նպատակին:

Զ Օ Ր Ա Ն Ա Ն Գ Է Ս

Յունիս 14ին, Երկաշարթի կէսօրէն առաջ ժամը 11.20ին տեղի ունեցաւ Դաշնակից ուժերու միացեալ զօրքերու հանդիսաւոր անցք մը, քաղաքիս զլիսաւոր հաստատութիւններէն Կ.Մ.Ս.Ա.Ի զիմաց: Ամբողջ պողոտան օրեր առաջ զրօշազարդուած էր դաշնակից ազգերու զբօշակներով: Արուսաղէտի նահանգային վսեմ. կառավարիչի գլխաւորութեամբ հանդիսատես եղան, պաշտօնապէս, քաղաքիս կրօնական հաստատութեանց ներկայացուցիչները և բարձրատիճան անձնաւորութիւններ: Պատրիարքարանիս կողմէ ներկայ գտնուեցաւ չոք. Տ. Գէորգ վրդ. ձանաղկեան: Կարգով, 31 զանազան տեսակի զօրաբաժիններ կը մասնակցէին անցքին — հեծելաւորներու, ձիաւորներու, զրահւոր ինքնաշարժերու, օդանաւորներու, նաւաստիներու և այլն: Իւրաքանչիւր զօրաբաժին իր ազգային տարազով: Անցան՝ հետիոտն կամ նեծեալ, Պաղեստինի, Բրիտանական և Միացեալ Նահանգներու Զինուորական Հեծելաւորներ, Արաբ Լէզենականներ, Յոյն, Բոլոնիացի, Կուկուլաեան, Սկովտական, Լնդկական, Ափրիկեան, և այլն զօրաբաժիններ: Կ.Մ.Ս.Ա.Ի առջև զօրահանգէսը աւարտեցաւ ժամը 12ին:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

\* 26 Ապրիլ, Բ. օր Ս. Զատիկի. — Հետեւեալ անձնաւորութիւնները այցելեցին պատրիարքարանս, ի շնորհաւորութիւն Ս. Զատիկի տօնին առթիւ:

Երուսաղէտի նահանգային կառավարիչ վսեմ. Պէլլի, ընկերակցութեամբ կառավարչատանց աւագ քարտուղարներու, — վսեմ. Բարձր Գամիսէրի անձնական թիկնապահը, և Ռուհի Պէյ Ապտէլհատի, — Երուսաղէտի Անկիլքան Եպիսկոպոսարանի Աւագ-Սարկաւագ Սթիֆըրտ և Կանտիկոս Չայր Պրիմէն: — Ռուս եկեղեցւոյ վերատեսուչ Գեր. Արչիմանտրիտ Անթանիօ: — Ղպտոց փոխանորդը, — Ասորոց Գեր. Տ. Ֆիլոսոփինոս եպիսկոպոսը և Չապէչայ Մեծաւորը: — Չայ կաթօրիկաց, Յոյն կաթօրիկաց փոխանորդները:

\* 30 Ապրիլ Ուրբաթ. — Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքը, իր հետևորդներով, փոխադարձ շնորհաւորական այցելութեան եկաւ ի պատրիարքարանս:



Տ Օ Ք Թ . Ն . Ե Ա Ղ Լ Ե Ա Ն  
1889-1943

Մայիս 22ին, սրտի հիւանդութենէն իր յաւիտենական հանգիստը մտաւ Ս. Աթոռոյս ամենուն սիրելի բժիշկ Տօթթ. Ն. Եաղլեան, հիւանդութեան ճիրաններէն երկար տառապելէ վերջ, որ թէեւ դանդաղ բայց տակաւ առ տակաւ մաշեց զինքը, հակառակ բաղդատմամբ իր քիչ տարիքին եւ տոկուն կազմին:

Տօթթ. Ն. Եաղլեան ծնած է 1889ին Կարսպազար: Իր բժշկական ուսումը ըրած է նախ Դամասկոս, ապա Կ. Պոլսոյ բժշկական համալսարանը, ուրկէ առած՝ իր վրկայականը 1915ին: Մեծ պատերազմի ամբողջ տեւողութեան իբրև զինուորական բժիշկ ծառայած է թրքական բանակին մէջ. նախ բժշկապետ Կ. Պոլսոյ պետական հիւանդանոցին, յետոյ եղած է վան, Պիթիս, Սղերտ, Միջագետք, ու պատերազմի վերջաւորութեան՝ զերի ինկած անգլիացիներուն: Ծանր ու տաժանագին եղած են իրեն համար այս կարճ բայց մուժ տարիները, իրենց անբակտելի կնիքը դնելու չափ ինչպէս իր հոգիին՝ նոյնպէս եւ իր ֆիզիք կազմին վրայ:

1920-էն սկսեալ իր ծառայութիւններու եւ գործունէութեան դաշտը կ'ըլլայ Երուսաղէմ. ուր կազմեց իր ընտանեկան բոյնը հայր ըլլալով հինգ ուսումնաստեւնչ եւ անուշիկ զաւակներու եւ պատուական կողակցի մը, որ Տօբթօրը լրացնող պահապան հրեշտակը եղաւ, ինչպէս իր կենդանութեան նոյնպէս իր մահէն վերջ:

1922-ին բժիշկ է Երուսաղէմի Արարատեան որբանոցին մէջ, մինչեւ 1925: Նոյն ատեն անձնական բժիշկը Հոգելոյս Դուրեան Արքազան Պատրիարքին: Իսկ 1936-էն սկսեալ վանուցս բժիշկ Տօբթ. Վ. Պասքալ, գործէ քաշուելուն առիթով, իրեն կը փոխանցէ Ս. Աթոռոյ եւ Ժառ. Վարժ.ի բժշկական իր սպասարկութիւնները: Մինչեւ իր մահը Տօբթ. Եաղլեան կատարեց խղճմտութեամբ իր պարտականութիւնը, Հոգելոյս Տ. Թորգոմ Արքազանի ինչպէս նաեւ Նորին Ամեն. Տ. Մեսրոպ Արքազանի անձնական բժշկի ալ հանգամանքներով: Եւ կը վայելէր հանգուցեալ երկու պատրիարքներու ալ մօտիկ բարեկամութիւնը:

Թաղման կարգը կատարուեցաւ Մայիս 23-ին իրիկուան ժամը 4-ին Ս. Յակոբայ Մայր Տաճարին մէջ, հանդիսագետութեամբ Լուսարարապետ Գեորգ. Տ. Կիրեղ Մ. Վրդ. Իսրայէլեանի: Ներկայ էր ամբողջ Միաբանութիւնը իր կազմով, եւ ժողովուրդի հեծ բազմութիւն մը, որ եկած էր գուրգուրանքով շրջապատելու սիրելի Տօբթօրին դագաղը եւ զայն առաջնորդելու իր հանգիստին:

Սրտառուչ պարագայ մըն էր հանգուցեալի տղուն իր հօր ի հող մահու դրուելէն երկու վայրկեան վերջ Պէյրութէն հասնիլը: Յուզումէն բարացած յուղարկաւորներուն ընդմէջէն Պ. Արամ Եաղլեան իջաւ իր հօր գերեզմանը, մէկդի ընելով բարակ խաւը հողին, եւ տուաւ հրաժեշտի համբոյրը իրմէն յաւերժ բաժնուող իր սիրելի հօր, որ, ինչ յոյսերով եւ սիրով կը սպասէր իր զաւակի աւարտելուն: Յուղարկաւորներուն արցունքը աննկարագրելի էր այս սրտանմիկ եւ թատերական տեսարանին առջեւ:

Դամբանական խօսեցաւ Հոգ. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, վեր առնելով հանգուցեալի արժանիքները եւ ազգային վաստակաւորի հանգամանքը, ու դրուատելով Ս. Աթոռոյ հաւատարիմ ու ժրջան պաշտօնեայի յիշատակը: Մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկչի ազգային գերեզմանատան մէջ:

Այս առիթով Ս. Յակոբեանց Միաբանութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ իրենց ամէնէն քաղցր սիրոյն մէջ խոցուած հանգուցեալի ազնիւ տիկնոջ եւ զաւակներուն, հայցելով Ս. Հոգւոյ մխիթարութիւնը սիրեցեալ Տօբթ. Եաղլեանի բոլոր պարագաներուն:

Հանգիստ իր հողին:

